Մրցույթ՝«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Աշխարհագրություն» (10 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դաս.), «ԵՇԱ» (12 դասաժամ՝ հայերենով և ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Պատմություն» (12 դասաժամ՝ հայերենով և ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Ֆիզկուլտուրա» (28 դասաժամ), «Երաժշտություն» (21 դասաժամ՝ հայերենով և ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Տեխնոլոգիա» (4 դասաժամ՝ հայերենով և ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Կերպարվեստ» (19 դասաժամ՝ հայերենով և ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Ֆիզիկա» (6 դասաժամ), «Կենսաբանություն» (6 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են **2023թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 6-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 11:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա **2023թ. հոկտեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ին**, Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոցում: Հասցե՝ ք.

Երևան, Արզումանյան 22: Տեղեկությունների համար զանգահարել (010) 39-10-80 հեռախոսահամարով: